ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2014 թվականի N 133 –Ա

2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ ԳՅՈՒՄՐԵՑԻ ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ըմբշամարտի 2014 թվականի աշխարհի առաջնությունում չեմպիոն դառնալու կապակցությամբ, գյումրեցի ըմբիշ Արթուր Ալեքսանյանին խրախուսելու նպատակով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Արթուր Ալեքսանյանին <<Հյունդաի Էլանտրա>> մակնիշի ավտոմեքենա ձեռք բերելու և նվիրելու համար հատկացնել դրամական միջոցներ՝ 9 880 000 (ինը միլիոն ութ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Թուլատրել նշված տրանսպորտային միջոցի անհետաձգելի համարվող գնումը իրականացնելու բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
3. Հանձնարարել.

ա. ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (5121) <<Տրանսպորտային սարքավորումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից,

բ. ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետին՝ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել ավտոմեքենայի հանձնման-ընդունման գործընթացը:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Մ. Գաբոյան _____		

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» սեպտեմբերի 2014 թ.